

Գառնատիճ

Վարչական ղեկավար՝ Աղջոյան Ամիրան

Հեռ +374 094-32-07-54

Մակերես՝ 37.6կմ²

Բնակչություն՝ 311

garnarits.shirak@mta.gov.am

Նախկինում համայնք Ամասիայի տարածաշրջանում, Ամասիա գյուղից 24կմ հյուսիս-արևմուտք, մարզկենտրոնից գտնվում է 37կմ հեռավորության վրա: Համայնքի վարչական տարածքի մեջ մտնում են Գառնատիճ և Եղնաջուր գյուղերը:

Նախկինում Գառնատիճը ունեցել է Խոզիքենդ, Խոզլի, Խոզլի Չիվինլի, Խոզու, Կուզիկյանդ, Ղուզիքենդ անվանումները: Կուզիքենդը Գառնատիճ է վերանվանվել 1991 թ-ին: Նախկինում մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ:

Գյուղը գտնվում է Աշոցքի սարավանդում, Արփի լճի հյուսիս-արևմտյան ալիքավոր հարթավայրում՝ ծովի մակարդակից 2020մ բարձրության վրա: Եղնաջուրը տեղադրված է Եղնաջուր գետի հովտում, Եղնախաղի լեռնաշղթայի հարավ-արևելյան լանջին՝ ծովի մակարդակից 2040մ բարձրության վրա: Համայնքի կլիման ցուրտ լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը զով է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Ունի սառնորակ աղբյուրներ, որոնք օգտագործվում են որպես խմելու ջուր: Գյուղում եղել են մասնակի ավերվածություններ 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից: Գառնատիճի տարածքում գտնվում է կիսավեր եկեղեցի, որի կառուցումը վերագրվում է 6-րդ կամ 10-րդ դարերին: Շրջակայքում կան կիկլոպյան ամրոցի ավերակներ:

Գյուղի բնակչության նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Բասենի, Մուշի շրջաններից, Կարսի մարզից 1830 և 1878թթ: 2001 թ-ի մարդահամարի տվյալներով Գառնատիճն ունեցել է 259, Եղնաջուրը՝ 41 բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 311 մարդ: Մեռային կազմում տղամարդիկ կազմում են 48%, կանայք՝ 52%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 29%, աշխատունակներ՝ 52%, հետաշխատունակներ՝ 19%: Ունի 56 տնտեսություն: Գառնատիճն ունի դպրոց, գրադարան, բուժկետ, մանկապարտեզ, կապի հանգույց:

Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը (251հա), խոտհարքերը (157հա): Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, խոտհարքեր, արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 381, 332, 2407 հեկտար: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ (խնձոր, տանձ, բալ): Զբաղվում են խոշոր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Գառնատիճ
Բնդեքս՝ 2704